**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ՇՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ**

09.01.2017թ.

ժամը 11:00

**Բացողներ՝**

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի առաջատար ծառայող Ս. Սալյան,

ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության տեխնիկական բաժնի սպա, մայոր Ա. Մակարյան:

**Օրակարգը՝**

1. «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով ՇՀ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել են և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Յուքոմ» ՍՊԸ |
| 2 | «ՎԵԲ» ՍՊԸ |
| 3 | «ԱրմենՏել» ՓԲԸ |
| 4 | «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ |

Բացող Ս. Սալյան

Բացող Ա. Մակարյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

09.01.2017թ.
ժամը 11⁰⁰.

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան:

**Գնումների համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

***«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

(Ա.Ամիրյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1 -ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Ա.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Յուրոմ» ՍՊԸ |
| 2 | «ՎԵԲ» ՍՊԸ |
| 3 | «ԱրմենՏել» ՓԲԸ |
| 4 | «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.*

**2 . «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ա.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «ՎԵԲ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ այդ թվում գնային առաջարկում, բացակայում են էլեկտրոնային ստորագրությունները: Հաշվի առնելով այդ հանգամանքը գնահատող հանձնախողովը որոշեց մերժել Մասնակցի հայտը:«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված են ոչ թե տնօրենի, այլ մեկ ուրիշ անձի կողմից, ուստի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և տեղեկացվել է մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ՝ այն է ներկայացնել էլեկտրոնային եղանակով ստորագրած անձի՝ տվյալ լիազորությունը հաստատող փաստաթուղթ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից: Բացի նրանից, որ «ՎԵԲ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ այդ թվում գնային առաջարկում, բացակայում են էլեկտրոնային ստորագրությունները, գնային առաջարկում նույնպես առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի գնային առաջարկի մեջ ներառված ինքնարժեք, շահույթ և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գումարը չի համապատասխանում տառերով ներկայացված գնին: Հաշվի առնելով այդ հանգամանքը գնահատող հանձնաժողովը մերժել է մասնակցի հայտը:

| Ծառայության անվանում | Նախահաշվային ընդհանուր գին | «ԱրմենՏել» ՓԲԸ-ի առաջարկ (չափաբաժնի ընդհանուր գին) | | «Յուքոմ» ՍՊԸ-ի առաջարկ (չափաբաժնի ընդհանուր գին) | | «ՎԵԲ» ՍՊԸ-ի առաջարկ (չափաբաժնի ընդհանուր գին) | | «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ- ի առաջարկ (չափաբաժնի ընդհանուր գին) | | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | |
| Ինտերնետային ծառայության մատուցում (համացանցային ծառայություններ մատուցողներ (isp) | Գնումը իրականացվում է օրենքի 14-րդ ի 7-րդ կետի հիման վրա | 21650000 | 25980000 | 15000000 | 18000000 | Հրավերի պահնջներին չհամապատասխանող գնային առաջարկ | | 10707500 | 12849000 | «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ |

3.2 Թվով 3 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները՝ համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա.Ամիրյան)

4.1 **16.01.2017թ.** «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում՝ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ (եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա.Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա.Ամիրյան)

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/1 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-1/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող (ԳԱՊ)**, գնդապետ — Տ. Մաթևոսյան

**Գնահատող**, կապիտան — Հ. Բարսեղյան

փոխգնդապետ — Խ. Երիցյան

Տ. Գասպարյան

**Գնումների համակարգող՝** — Ա. Ամիրյան